Հաստատված է
Գորիսի պետական համալսարանի
գիտական խորհրդի նիստում

ՈՒԳ աշխ. գծով պրոռեկտոր

_____ Զ. Գրիգորյան

« 14 » մայիսի 2024 թ.

ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի մշակման ուղեցույց

I. Ընդհանուր դրույթներ

Սույն ուղեցույցը իր մեջ պարունակում է ցուցումներ Գորիսի պետական համալսարանում (այսուհետ Համալսարան) կրթական ծրագրերի մշակման վերաբերյալ:

Համալսարանում կրթական ծրագրերի նախագծումը և մշակումը կատարվում է նկատի ունենալով, որ

1. Ծրագիրը պետք է ունենա հստակ նպատակ և կրթական վերջնարդյունքներ
2. Պետք է սահմանվի ծրագրի մակարդակը ըստ բարձրագույն կրթության ազգային որակավորումների շրջանակի
3. Ծրագրի մշակման ընթացքում պետք է հաշվի առնել ներքին և արտաքին կրթական կողմնորոշիչները, աշխատաշուկայի պահանջները:
4. Ծրագիրը պետք է տեսական և գործնական մասերի միջև ապահովի որոշակի համամասնություն
5. Կրթական ծրագրում պետք է որոշված լինեն կարիերայի հետ կապված հնարավորությունները
6. Պետք է նշվեն ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ ռեսուրսները:

II. Կրթական ծրագիրը

Կրթական ծրագրի մշակումը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ.

Ծրագրի նպատակների սահմանում

↓

Ծրագրի կրթական վերջնարդյունքների սահմանում

↓

Գնահատման ձևերի որոշում

↓

Ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրություն

Ծրագրի մշակման ժամանակ պետք է ապահովել **կրթական վերջնարդյունք→ գնահատման ձևեր→ դասավանդման և ուսումնառության մեթոդներ** բաղկացուցիչների տրամաբանական կապը:

III. Ծրագրի կրթական նպատակները

Ծրագրի կրթական նպատակը սահմանումից պետք է հիմք ընդունել հետևյալ սկզբունքները;

7.Կրթական ծրագիրը պետք է ունենա հստակ սահմանված նպատակ

8. Նպատակները պետք է լինեն դյուրընկալ:

9. Նպատակները սահմանելիս պետք է ցույց տրվեն ծրագրի մասնակցի հնարավորությունները և առավելությունները:

10. Նպատակները կարելի է ընդունել նաև որպես կրթական վերջնարդյունքների ընդհանուր ձևակերպում:

Նպատակները ձևակերպելիս խորհուրդ է տրվում օգտագործել *զարգացնել, ապահովել, օժանդակել, տեղեկացնել,ծանոթացնել, նախապատրաստել, խթանել, աջակցել և* նմանօրինակ բառեր:

IV. Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

Կրթական վերջնարդյունք ասելով՝ հասկանում ենք այն, թե ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա ուսումնառողը կրթական ծրագրի ավարտին:

11. Կրթական վերջնարդյունքները պետք է լինեն ստուգելի և չափելի:

12. Պետք է գնահատվի ձեռք բերված վերջնարդյունքը:

13. Ծրագիրը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ուսումնառողը յուրացրել է բոլոր կրթական վերջնարդյունքները:

14. Ծրագրի կրթական վերջնարդյունքը իր մեջ ներառում է՝

- մասնագիտական գիտելիքներ,
- գործնական մասնագիտական կարողություններ,
- ընդհանրական կարողություններ:

15. Ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքների քանակը պետք է լինի նվազագույն, բայց և բավարար՝ ծրագրի հիմնական բնութագրերը արտահայտելու համար:

V. Ուսումնական մոդուլների կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

Ուսումնական մոդուլների կրթական վերջնարդյունքները իրենց մեջ ներառում են՝

- գիտելիք,
- կարողություն,
- հմտություն:

16. Ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները իրենց մեջ պարունակում են տեղեկատվություն այն մասին, թե ինչը պետք է գնահատվի, և ինչը պետք է իմանա, հասկանա և կարողանա ուսումնառողը:

17. Ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները պետք է լինեն գնահատելի:

18. Անցողիկ գնահատական ստանալու համար ուսումնառողը պետք է յուրացնի սահմանված բոլոր կրթական վերջնարդյունքները:

19. Ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները շարադրելիս խորհուրդ է տրվում ապահովել հետևյալ պահանջները.

- որոշակի քանակ(4-6)
- մատչելիություն
- վերջնարդյունքների ձեռքբերման և գնահատման միջև նկատելի կապ:

Կրթական ծրագրերի վերջնարդյունքների սահմանման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայից.

Մակարդակ	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը (ցանկն ամբողջական չէ)
1.	**Գիտելիք** (որոշակի փաստերի/ տվյալների հիշողություն)	Արտահայտել, գիտակցել, ընտրել, վերարտադրել, չափել, որոշել, թվարկել, անվանել, վերհիշել, գրանցել, պնդել և այլն
2.	**Իմացություն** (փաստերի/տվյալներիհամակարգ մանունակությունիմաստըհասկա նալունպատակով)	Որոշել, սահմանել, ներկայացնել, ձևակերպել, բացատրել, հակադրել, նկարագրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, դասակարգել և այլն
3.	**Կիրառություն** (առաջադրանքի կամ խնդրի համատեքստում գիտելիքի / իմացության օգտագործում)	Կանխատեսել, ընտրել, գնահատել, գտնել, ցուցադրել, օգտագործել, կառուցել, հաշվարկել, կիրառել, ցուցաբերել, լուսաբանել, գործնականում իրականացնել, սովորեցնել, կատարել և այլն
4.	**Վերլուծություն** (տեղեկատվությունը բաղկացուցիչ մասերի կամ իմաստների բաժանելու ունակություն՝ մասերի փոխհարաբերությունները կամ նշանակությունները հասկանալու նպատակով)	Համեմատել, տարբերակել, համադրել,/հակադրել, տրոհել/ մասերի բաժանել, տարբերակել, վերլուծել, հաշվարկել, փորձարկել, բացահայտել, տարանջատել, լուծել և այլն
5.	Սինթեզ/համադրություն(տեղեկ ատվությունը կամ փաստերը նորովի համատեղելու ունակություն՝ խնդրի կամ հիմնախնդրի ավելի լավ կամ համակողմանի ընկալման նպատակով)	Միավորել/միացնել, ի մի բերել, փաստարկել, հարաբերել/կապ հաստատել, ամփոփել, կազմակերպել/համակարգել, եզրակացնել/եզրահանգել, նախագծել, առաջարկել, վերաձևակերպել, քննարկել, ստանալ/դուրս բերել,

		մակնաբանել, ընդհանրավնել և այլն
6.	**Գնահատում/արժևորում** (առկա տեղեկատվության հիման վրա եզրահանգումներ անելու և կամ առաջարկելու՝ ներառյալ այդ եզրահանգումները հնահատելու ունակություն)	Արժևորել, օժանդակել/աջակցել, հակադրել/համադրել, ընտրել, քննադատել, որոշել, համեմատել,գնահատել,եզրահանգել, հետևություններ անել, ենթադրել, պաշտպանել, հարձակվել և այլն:

VI. Ուսումնական պլանը և ուսումնական պլանի քարտեզը

Ուսումնական պլանը ներառում է կրթական ծրագրի ընդհանուր բովանդակությունը և կառուցվածքը: Այն ապահովում է ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը; Ուսումնական պլանում նշված են լինում հիմնական կրթամասերը, ուսումնական մոդուլները՝ ըստ ուսումնական տարիների և կիսամյակների, կրեդիտները, քննությունները, պրակտիկաները և այլ տվյալներ:

Ուսումնական պլանի քարտեզը(հավելված 3) կապ է հաստատում կրթական ծրագրի և ուսումնական մոդուլների վերջնարդյունքների միջև:

Ուսումնական պլանի քարտեզի վրա հորիզոնական տողերում նշվում են մոդուլները, իսկ ուղղահայաց սյունակներում՝ ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Վերջիններիս հատման վանդակում կատարվում է նշում, որը ցույց է տալիս տվյալ վերջնարդյունքը և կրթական մոդուլի կապվածությունը:

VII. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը

Դասավանդումը պետքէ ուսանողների համար պայմաններ ստեղծի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար: Ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրության համար կարող ենք հիմք ընդունել հետևյալ սկզբունքները.

- Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է առավելագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը ուսանողների կողմից:
- Ուսումնառության և դասավանդման մեթոդներն ընտրելիս պետքէ հաշվի առնել ընդունակությունների տարբեր աստիճաններ ունեցող ուսանողների կարիքները:
- Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է հնարավորություն տան խմբակային աշխատանքներ կատարելու, նպաստեն ուսանողների ակտիվությանը և ինքնուրույն գործելակերպին:
- Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է ապահովեն հետադարձ կապ ուսանողի և դասախոսի միջև:

VIII. Շրջանավարտների կարիերայի հնարավորությունները

Կրթական ծրագիրը շրջանավարտների համար պետք է հնարավորություն ընձեռի կարիերայի և ուսման շարունակականութունը ապահովելու համար: Այսինքն՝ ծրագրում պետք է երևա կապը աշխատաշուկայի հետ: Միաժամանակ գործատուները պետք է ներգրավվեն կրթական ծրագրերի մշակման

գործընթացներում: Կրթական ծրագրից ուսանողը պետք է հստակ տեղեկատվություն ստանա պրակտիկաների վերաբերյալ:

IX. Ծրագրային կողմնորոշիչների օգտագործումը

Կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն ներքին և արտաքին կողմնորոշիչներին:

Արտաքին կողմնորոշիչներ են հանդիսանում.

- ՀՀ բարձրագույնն հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը,
- Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը,
- Որակավորումների եվրոպական շրջանակը,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը,
- մասնագիտական կազմակերպությունների պահանջները,
- մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ծրագրային հավատարմագրման չափանիշները
- առաջավոր ԲՈՒՀ-երի կրթական ծրագրերը

Ներքին կողմնորոշիչներ կարող են հանդիսանալ.

- Համալսարանում կրթական ծրագրերի հետ առնչվող գործող կարգերը,
- Համալսարանի ռազմավարական ծրագիրը,
- այլ փաստաթղթեր:

X. Կրթական ծրագրի մասնագիրը

Կրթական ծրագրի մասնագիրը ծրագրի համառոտ նկարագրությունն է: Ծրագրի մասնագիրը տեղեկատվություն է(հավելված 2)՝

- ուսանողների համար,
- գործատուների համար,
- իրավասու մարմինների համար,
- բուհերի և ծրագրերը հաստատող կառույցների համար,
- փորձագետների և արտաքին գնահատողների համար,
- շրջանավարտների հետադարձ կապի ապահովման համար:

XI. Ուսումնական մոդուլի նկարագրերը

Համալսարանում գործող կրթական ծրագրերում ընդգրկված դասընթացները ներկայացվում են հետևյալ նկարագրերով.

- առարկայի անվանում
- առարկայի դասիչ
- մասնագիտություն
- կրթական ծրագիր
- ամբիոն
- ուս. տարի/ կիսամյակ
- կրեդիտներ
- դասաժամերի բաշխում
- նախապայման

- համառոտ բովանդակություն
- նպատակ և խնդիր
- վերջնարդյունքներ
- գրականություն
- գնահատման ձևեր
- գնահատման սանդղակ
- գնահատման չափանիշներ
- այլ տեղեկություններ

Դասընթացի նկարագրիչների ձևաչափերը ներկայացված են հավելված 4-ում:

XII. Ուսումնառության ռեսուրսները

Կրթական ծրագրերը իրականացնելու համար պահանջվում են ուսումնառության որոշակի ռեսուրսներ: Դրանցից հիմնականներն են՝

- դասախոսական և օժանդակ անձնակազմ
- տեխնիկական միջոցներ
- ուսումնամեթոդական նյութեր
- ուսումնական տարածքներ
- Ֆինանսական միջոցներ
- պրակտիկայի բազա:

Հավելված 1

Գիտելիք և իմացություն		Գործնական մասնագիտական կարողություններ		Ընդհանրական կարողություններ	
Ա1		Բ1		Գ1	
Ա2		Բ2		Գ2	
Ա3		Բ3		Գ3	
Ա4		Բ4		Գ4	
Ա5		Բ5		Գ5	
Ա6		Բ6		Գ6	
Ա7		Բ7		Գ7	
Ա8		Բ8		Գ8	
Ա9				Գ9	

Հավելված 2

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐԸ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը
2. Բուհը

Գորիսի պետական համալսարան

3.1 ՈԱՇ-ի մակարդակը

Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ և 7-րդ մակարդակ

3.2 Որակավորման աստիճանը

Մանկավարժության բակալավր, Մանկավարժության մագիստրոս

3.3 Կրեդիտների քանակը

240 կրեդիտ

4. Ուսումնառության լեզուն

Հայերեն

5. Ուսուցման ձևը

Առկա

6. Արտոնագիրը

Արտոնագրված է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից

7. Կրթական ծրագրի մուտքի պայմանները
8. Ծրագրի նպատակները
9. Ծրագրի վերջնարդյունքները
10. Ուսուցման և դասավանդման մեթոդները
11. Գնահատման մեթոդները(տես գնահատման կարգը)
12. Մասնագիտական գործունեության ոլորտները
13. Հետագա ուսուցման հնարավորությունները
14. Ուսումնական պլանը՝ ըստ ուս. տարիների և կիսամյակների
15. Ուսումնառությանը օժանդակող ռեսուրսները
17. Առարկայական նկարագիրը
18. Ուսումնական պլանի քարտեզը

Հավելված 3

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ(ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶ)

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ	ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ																							
	ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ								ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ								ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ՓՈԽԱՆՑԵԼԻ)							
	1	2	3	4	5	6	7	8	1	2	3	4	5	6	7	8	1	2	3	4	5	6	7	8

Հավելված 4

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Առարկայի անվանումը	
Առարկայի դասիչը	
Մասնագիտություն	
Կրթական ծրագիր	
Ամբիոն	
Ուս. տարի/ կիսամյակ	
Կրեդիտներ	
Դասաժամերի բաշխում	
Նախապայման	
Համառոտ բովանդակություն	
Նպատակ Խնդիր	
Վերջնարդյունքներ Իմանա Կարողանա Տիրապետի	
Գրականություն • Հիմնական • Լրացուցիչ	
Գնահատման ձևեր	Տե՛ս «Գորիսի պետական համալսարանի ուսանողների գիտելիքների գնահատման կանոնակարգ»
Գնահատման սանդղակ	

Գնահատա-կանը	Արդյունա-բար միավորը	Թվա-նշանը	Տառայինն շանակումը
Գերազանց	95-100 87-94 81-86	4,0 4,0 3,7	A+ A A-
Լավ	75-80 67-74 61-66	3,3 3,0 2,7	B+ B B-
Բավարար	55-60 46-54 40-45	2,3 2,0 1,7	C+ C C-
Անբավարար	<40	0	D
Ստուգված	≥ 40	-	S
Չստուգված	<40	-	U

Գնահատման չափանիշներ	Հաճախումներ, ստուգարք կամ քննություն, ընթացիկ ստուգումներ, գործնական/սեմինար պարապմունքներ
Այլ տեղեկություններ	